ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
№ 20 (40)
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է
Թաւրիզում . . . . . . 20 ղրան
Գաւառներում . . . . . . 25 ղրան
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ռուսաստան . . . . . 5 րբ.
Թուրքիա . . . . . . 50 ղուրուշ
Եւրոպա . . . . . . 14 ֆրանք
Ամերիկա . . . . . . 2,50 տոլ.
Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 20 շահի
Չորրորդ „ „ 10 „
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 ՇԱՀԻ
Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris Perse
Rédaction du journal arménien ,,MITK''
= Adresse télégrafique Tauris ,,MITK'' =

# ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

اداره روزنامهٔ میطق

MITK
Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian
TERMS OF SUBSCRIPTION
for a year payable in advanc . . 0 krans.
Foreign Dollars 2. 50
RATES OF ADVERTISEMENTS:
one printing line on the 1-st page 10 cen.
,, ,, ,, ,, 4-th ,, 5 ,,
15% discount for annual subscription paid in advance. Address
Rédaction ,,MITK''
Tabriz, Persia

Գ. ՏԱՐԻ № 20 (40) ԹԱՒՐԻԶ, ՇԱԲԱԹ 31 ՄԱՅԻՍ 1914 Թ. Tauris, Samedi le 13 Juin 1914 № 20 (40) Vol. III

Требуйте и курите папиросы только
**Т. Д „Бр. Сейлановыхъ"**
*Египетскія, Ирисъ, Прима, Паросъ, Орелъ и Марсъ.*
продаются во всѣхъ магазинахъ

*Русское Товарищество*
**АНОНИМЪ**
*Спирто Ректификаціонный Коньячный заводы*
и
склады ликоровъ виноградныхъ и столовыхъ винъ, спирта и натуральныхъ коньяковъ.
*Урмія*
Со справками обратиться въ контору
Братья Будагянъ. 3—3

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԱՆՕՆԻՄ„
ՍՊԻՐՏԻ ԵՒ ԿՕՆԵԱԿԻ ԶՏԻՉ ԳՈՐԾԱՐԱՆ
ԵՒ
ԼԻԿԵՕՐՆԵՐԻ, ԽԱՂՈՂԻ ԵՒ ՍԵՂԱՆԻ ԳԻՆԻՆԵՐԻ, ՍՊԻՐՏԻ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼ ԿՕՆԵԱԿՆԵՐԻ
ՍԿԼԱԴՆԵ
ՈՒՐՄԻԱ
Տեղեկութիւնների համար դիմել
ԵՂԲԱՐՔ ԲՈՒԴԱՂԵԱՆՆԵՐԻ
կանտորը
3—3

Ուզո՞ւմ էք ձեր միայնութեան ժամերին լաւ խօսակից ունենալ՝ ծխեցէ՛ք միայն
եղբարք **ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐԻ** սեփական գործարանի
**ԵԳԻՊԵՏՍԿԻԱ, ԻՐԻՍ, ՓԱՐՈՍ, ՊՐԻՄԱ, ԱՐԻՕԼ**
և **ՄԱՐՍ** պապիրոսները.

Արդէն թերթիս երեսները կապուած էին, որ թեմիս առաջնորդի անուամբ հեռագիր ստացուեց Էջմիածնից Բաքւէն*) վարդապետից, թէ «Միտք»-ի նախորդ համարի Էջմիածնից արուած ակնարկութիւնը եր մասին անհիմն է, այդ պատճառով սոյն սիւնակից հանեցինք նրա մասին եղած թղթակցութիւնը և գրենք Սէյլանովի աղդն ու մեր ներկայ ծանօթութիւնը, թողնելով լուրի վերս տուգութիւնը յաջորդին։

Խմբ.

---

## ՈՐՈՄ ՑԱՆՈՂՆԵՐԸ

(Պատասխան «Ճարիտէյի Իսլամ»ին)

—Ունե՛ք, կործանո՛ւմ, ջրհեղե՛ղ...

Անձ այս է գումում Թաւրիզում հրատարակուող յետադէմ «Ճարիտէյի Իսլամ» պարսկ. թերթը։

Գիտէ՞ք ինչու է նա այդպէս բարձր բղաւում և կարծեւոյ կանչում...

Եթէ չգիտէք, լսեցէք ամենքդ։

Նա, կամ նրա համախոհ թղթակիցը, մէջբերում է յինում հաւատացնելու, որ երկու ջուխտ ու մի կէնտ հայերը կործանում են Իսլամը և կործանում նաև Ատրպատականի 5 միլիօն... թուրքութիւնը։

Եւ այս բոլորից յետոյ նա զայրանում է որ հիւրանոց ու գինետուն պահող այդ «ռա՛ֆար» հայերին վարչապետները ընդունում են պետական ծառայութեան մէջ։

Հայերին այսպէս նո՛ւսելուց յետոյ, նոյն թերթը մաց ա պատիժ ու անպատասխան։ Այն վարձկանները, որոնք երէկ գոռում էին վերջին Նօտայով և ի ձայն թնդանօթի՝ իրենց սուութեան օրգանում բարող էին կարդում թէ՝ «մեր միասին լաւ չէ», լաւ են վատօրէն ամեն հարցի առաջ և ամեն բայլ։ Լաւ են և հեղինակաւոր անձինք։ Եւ, որ զարմանալին է, լաւ ու լաւ է և մեր առաջնորդարանը այդ ազգային խայտառակութեան հանդէպ։

Ինչպէս ամեն անգամ, լինի այդ ազատութեան թէ բէակցիայի օրերին, մենք խօսել ենք անվերապահ, կտրուկ և շեշտակի, խօսում ենք և այժմ, բարձր դասելով մեր ազգի պատիւն ու կրօնի արժանապատւութիւնը։

Արդ, թողնելով ու սպասելով որ յայտնի վարձկանները, ժողովուրդն ու նրա առաջնորդարանը կատարեն իրենց բաժին պարտքը մեզ «ռա՛ֆար» անուանելու այս հարցում, մենք մեր սեպուհ պարտքն ենք համարում այս անթիւ «Ճարիտէյի Իսլամ»ին մի քանի դիտողութիւններ անել և տալ նորան իւր արժանի պատասխանը։

«Ճարիտէյի Իսլամ», դուք Ձեր Իսլամի կամ ազնուութեան կորուստն ու կործանումը այլ տեղ և այլոց մօտ փնտրեցէք և ոչ հայի. կամ աւելի ճիշտ՝ հէնց Ձեզ նման խաւարամիտ ու յետադէմ Իսլամների մօտ որոնէք։

Հայն ինչ գործ ունի Ձեր կրօնի հետ։ Նա եթէ անգամ կրակ էլ լինի Ձեզ ու Ձեր կրօնին ոչինչ չի կարող անել։ Նա մինչև իսկ այնքան է «զարգացել» որ իր կրօնով իսկ չի հետաքրքրւում։ Էլ, ուրեմն, ինչու և ինչպէս նա կարող է Ձեր կրօնը — Իսլամը կործանել։

Ո՞վ և ինչն է թունաւորել Ձեր

*) P. S. Մեր հոգեշնորհ եպիսկոպոսացուն Ղլաճեանի թարեկամներից է և նրա համար ամենաեռանդուն աշխատողներից մէկը։

Կամենտարիաներն աւելորդ են։

Թղթակից.

